ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական խորհուրդն իր վերջին նիստում՝ ամսիս 2-ին որոշել է իր կողմից պատգամաւոր ուղարկել Էջմիածին հոգաբարձական խորհրդի անդամ Գ. Տէր-Ստեփանեանին ազգային մեծ յոբելեանին մասնակցելու համար։

Նոյն դպրոցի մանկավարժական ժողովի կողմից պատգամաւոր է ընտրված տեսուչ Ստ. Մալխասեանցը։

—

Մարիամեան-Յովհաննեան դպրոցի ուսուցչական խմբից 6 հոգի ցանկութիւն են յայտնել յոբելեանի օրը գնալ Էջմիածին. հոգաբարձական խորհուրդը՝ յարգելով նրանց խնդիրը՝ դիւրութիւն է տուել նրանց՝ ազատելով երկուշաբթի օրվայ՝ ամսի 14-ի դասերից։

—

Նոյն դպրոցում հոգաբարձական և ուսուցչական մարմինների մէջ հանգանակված է յօգուտ դպրոցական ֆոնդի մօտ 150 ր.։

—

Մենք անցեալ անգամ հաղորդեցինք, որ Կ. Պոլսի Հայոց Միացեալ Ընկերութիւնը նշանակել է Հ. Առաքելեանին ներկայացուցիչ Էջմիածնում և Թիֆլիսում կայանալիք յոբել. տօնախմբութիւնների ժամանակ։ Եւ էկ մենք ստացանք մի երկրորդ հեռագիր, որ յայտնում է, թէ Հ. Առաքելեանի հետ միասին նշանակված են ներկայացուցիչներ պ. պ. Ալ. Մելիք-Ազարեան և Ալ. Քալանթար։

—

Կովկասի Հայոց Հրատ. Ընկերութեան

վարչութիւնը իր ամսիս 3-ի նիստում որոշել ամբողջ կազմով ներկայ լինել Թիֆլիսում կատարվելիք հայ տպագրութեան 400-ամեայ և տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանական հանդէսներին։ Վարչութիւնը յանձնարարել է իր նախագահ բժ. Ա.

Զարգարեանցին Ընկերութեան կողմից շնորհաւորանք մատուցանել։ Վերոյիշեալ տոների առիթով Ընկ. լոյս է ընծայում Ստ. Նազարեանի ժողովածուի հատորը, շքեղ հրատարակութեամբ, որը նուիրված է այդ տօների յիշատակին։